



1843-1895 ՀԱՅՈՐ ԵՊ ՆՈՅՆՄԲԵՐ

ՀԻՆ ՀԱՒԱՏՔ ՀԱՅՈՑ

ԳԼ. ԺԳ. - ՓԱՇՏԱՄԱՌՆԻՔ, ՓԱՇՏՈՆԱՐԱՆԻՔ, ՓԱՇՏՈՆԵՆԱՅԻՔ, ԾՊԱՍՔ

(Տես յէջ 433)

 ԱՇՏ ԵՒ ԶՈՆ. — Սովորական իմաստէն զատ նշանակեն երբեմն և պաշտամանց Սպասքը կամ զործիրը. ինչպէս հին զբրուածի մի մէջ (ի խորհուրդ եկեղեցւոյ) բռնուած է, « Շիւ հուածը պղնձոյ և Մահարձանաց և Զո » հից ». որոց որպիսութիւնն այլ կ'արժէր փիտնալ. Ազատանցել Զոհարանները յիշած առեն՝ անոնց նիւթն և աղնութիւնն այլ բացատրէ, « Ոսկեղէն և արծաթեղէն զար » դուք, և վերջապէս փողփողեալս, Նշա » նակապ պաշարակապ մետաղաքիւն, և ու » կովք Պսակօք, և արծաթի Զոհարանօք, յա » նօթս ցանկալիս՝ ակամբք պատուականօք, » ոսկով և արծաթով, հանդերձս պայծառս, » և ի վարդս գեղեցիկս » : Ընդարձակօրէն բ » ասծէն թէ և որոշ չիմացուիր ինչ ձեւ ըլլալնին,

բայց զիտեղու արծանի են վերջապէս փողփողեալք, խոյրից տկանջէն կախուածք, Նշա » նակապքն՝ թուի նոյն խոյրից վրայ, և Ոսկի Պսակքն. նա և արծաթի Զոհարանքն, որ թէ Սեղանը կրնան նշանակել, թէ զոհերը կամ անոնց արիւնը և մասերը դնելու անօթներ : — Ս. Գրոց, վկայաբանութեանց և փիլոսոփայութեան թարգմանութեանց մէջ՝ տա » ճարաց և զոհից սպասուց այլեւայլ անունք գտուին, ինչպէս Նշարանօք, որ և Նշարանք, Ճաշակք, Սկառասակք, և այլն. որոց հարկ է թէ նման էին և մեր հեթանոսաց սպասքն. բայց զի յատուկ չեն յիշուած, կամ ջնջուած են յիշատակէն, օտարաց զիցաբա » նութեան մէջ կրնան Կոնստանտինուպոլսէ փափագողք այսպիսեաց հանգամանքը. յիշելով անոնց հետ և զՄշտիկն և զԲարսմունս :

Դից պաշտամանց վրայ գրելով՝ յիշած եմք

և անոնց ոմանց Տօնից օրերը. բայց հեթա-
նոսական հայ Տօնացոյց մի չէ հասած մեզ,
բայց ի հին տօմարից մէջ յիշուած քանի մի
քաղղէական յիշատակներէն: Տօն կամ Տան
բառն այլ ի հին հաւատոց Հայոց համարելի
է, և հետաքննելի ծագումն կամ ստուգա-
բանութիւնն. զուցէ Տալ, տուրք բառից ար-
մատն ըլլայ, ինչպէս Զօն. (իր համաձայն
յիշենք հարեւանցի Արգիացոց Հերազի-
ցունայ տօները՝ զոր Տօնեայ կոչէին, To-
née): « Պարսիկ աղանդոյ հետ հարկաւ անոնց
տօնական անուանքն այլ մտած են առ մե-
րայինս. (ինչպէս կրօնական անուանքն Կեշտ,
Քէշ, Է այլն). այսպէս և Զէշ կամ Զաշ որ
տօն նշանակէ. ինչպէս լսուի ի Թղթի Ստեփ.
Սիւնեցոյ առ Գերմանոս. « Նստէաք ի խա-
» ւարի դիցատօնակ Զաշանց հեթանոսակա-
նաց »: Եւագրի գրուածոց մէջ այլ գրուած է
սիւալ, « Զաշանց տօնից տարեկանաց հեթա-
» նոսաց չհամարուի »: Հին բաղդիքը զԶա-
շանց Թարգմանէն՝ Չոհ, Նուէր, որ կրնայ
Պարսից լեհնի բառը նշանակել, և մեր ճա-
շակը: Ուրիշ քաղղիքը մ'այլ իր ուղղական
անհոլով զԶաշանցն՝ դիւապաշտ կամ դիւա-
նուէր մեկնէ:

Գ. ՊԱՇՏՈՆԱՆԱՅԳ. — Ոչ պակաս՝ զուցէ
և աւելի հետաքննական է ճաննալ մեր հե-
թանոս նախնարց հաւատոց պաշտօնեայքը,
որք և Թուին աւելի զանազանութիւն ունե-
նալ օտարներէն՝ քան թէ իրենց պաշտե-
լիքն: Այսմա կամ քրիստոնէական սովորու-
թեամբ՝ ամեն կրօնից հասարակ պաշտօնա-
կատարը՝ Քահանայ կոչեմք, բայց չեմք կար-
ծեր թէ այս անունն հասարակ ըլլայ նա և
անքրիստոնէայ մերայոց. բառն յայտնի է որ
սեմական է, կամ քաղղէական և եբրայական,
Քօհեն. նոյնպէս և ըստ Արաբաց Քեահենէ՝
յոգնաբար քահանայս նշանակէ, և իմաստն է
Քաւիչ, գլխաւորն այլ Քաւչապետ. ըստ այսմ
Սրբող և Մաքրող ստուգաբանէ մեր Լամ-
բրունեցի Հայրն: Որչափ այլ քաւութիւն և
քահանայ՝ ձայնական մօտութիւն ունին՝ երկ
բայական է նոյնազորն ըլլալին. թէ և
հասարակօրէն չէր զործածուած այս անունն,
բայց անսարակաւ ծանօթ էր մերայոց, մա-
նաւանդ հարաւայնոց՝ սահմանակցաց սեմա-

ցեղից: Նմանաձայնութիւն մի կրնայ գտուիլ
և առ օտարս, բայց շատ զարմանալի է,
(եթէ ստոյգ աւանդեն և լսեն ուկիանոսի խո-
րեւն այլ քննող եւրոպացիք), որ Սանտի-
զեան կղզեաց բարբարոսքն այլ Քահանա կո-
չեն իրենց կրօնից պաշտօնեայն, և Քահա-
նա—Նոռի զքահանայապետն: Շատ մեծ և
կարեւոր խնդիր կրնայ հանել այս համա-
ձայնութիւնս, իրրեւ ամենահին կրօնական
միաբանութեան, կամ հնագոյն նաւարկու-
թեամբ բերուած յԱսիոյ առ անծանօթ կղզ-
եցիս:

Մեր հին պաշտօնատեղիք՝ տեսանք որ
Մեհեան կոչուէին, յորմէ և պաշտօնեայք
ոմանք Մեհենակալ և Մեհենակպետ, ինչ-
պէս և գրուածքն Մեհենականք. բայց յա-
տուկ և հասարակ պաշտօնէի, կամ ըսենք
քահանայի՝ այս բառէն ձեւացեալ անուն մի
չի յիշուիր. այլ այնոր տեղ մերոց հին կրօ-
նից պաշտօնեայն հասարակօրէն կոչուի Քուրմ,
գլխաւորն Քրմակապետ, բնակաբանն կամ Ժո-
ղովատեղին՝ Քրմարան: Նշանաւոր ձայնիւ
անուն մ'է Քուրմ, և հարկ է որ շատ հին
ըլլայ. ծագումն այլ զուցէ յատուկ զուցէ ոչ
յատուկ հայկական. վանական վ. հարցանէ
և պատասխանէ. « Քուրմն զի՞նչ ասի. —
» պարսկերէն՝ Հրավառ »: Ասորոց լեզուաւ
այլ Քուրմոյ քահանայ նշանակէ. Հնդկաց
կրօնից մէջ այլ լսուի Քուրմա, ոչ անհն,
այլ սրբազան Կրիայ, վասն զի իրենց Վիշնու
մեծ յատուածն՝ որ եօթն անգամ այլակերպ
եղեր է, անգամ մ'այլ Կրիայի ձեւ առեր
է, որ և կոչուի ՔուրմաՎադարա (Կրիափո-
խութիւն), և այնպէս կրցեր է շալկել ի
ծով ընկած երկնից հասարատութիւն Մերու-
լեւր. — արգարեւ առասպելաց առասպել:
Իրենց հին սրբազան (Վեդայ) քրոց մէջ այլ
յիշուի Քրուշնա, Քրուշոն, Քրաւնա զետ
մի. — Քուրմի սովորական անուն ըլլալուն
ի Հայս՝ վկայեն վերոյգրեալ բարդութիւնքն,
որոց անլցընեմք եւս Քրմուհի, Քրմակիւն,
Քրմանոյշ, Քրմորդի, և աւելի պարզ բառ՝
Քրմուշիւն, և Քրմանաւ. իսկ Քրմարանը՝
Ստեփ. Ռաշեան իր հայ—լատին Բառարանին
մէջ կ'ընէ խորենացոյ պատմութենէ առած,
որ այսոր ծանօթ Հայոց պատմութեան մէջ

չի գտուիր. այլ տեղին գուցէ Գրմատու-
ղով բաւածն ըլլայ. կամ բնակարան մի՝
թիպեզաց Լամայարանի նման, թէ ամուրի
թէ կանամբէ քրմաց, սւր ոչ հարիւրաւոր
միայն՝ այլ և հազարաւորք բնակէին. յար-
մարի այսոր և Մենենագեոց կոյտածն ի Հայս,
իրեն գեող մի բոլոր բնակութիւն քրմաց,
ինչպէս էին ի Տարօն. և այնքան բազմա-
թիւք էին՝ որ զօրածողով ընելով՝ թագա-
ւորին զօրաց հետ կոռեցան իրենց կուռ-
քերը և մեհեանները պաշտպանելու համար.
և յետ շարաշար կոտորածի՝ դեռ 438 հոգի
գերուած քանտուեցան, Լուսաւորչի այս կող-
մերս եկած առեն: — Հաւանօրէն այլ և
այլ դասք և աստիճանք էին Գրմաց, որոց
ամենէն գլխաւորն Գրմապետն՝ շատ մեծ
պատիւ ունէր, իրեն զմի ի մեծազոյն իշխա-
նազանց յարգունիւ. հաւանօրէն ցերիւր և
ժառանգութեամբ էր քրմապետութիւն: —
Ի սկզբան Սելակունեաց թագաւորութեան՝
այս կրօնական մեծապատուութիւնն տրուեցաւ
Վահոնեաց՝ որ էին ի ցեղէն Վահագնի զիւ-
ցազին Հայոց. « որք ինքնակամ ինչդեցին
» զմեհենիցն պաշտամունս. և (Վաղարշակ)
» պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա
» զքրմութիւնն, և կարգէ ընդ առաջին նախ-
» արարութիւնս, և անուն կոչէ վահուռ-
» նին »: Հաւանօրէն ոչ պարզ քրմութիւն
էր անոնց տրուածն, վասն զի առանձին գա-
ւառի և ցեղի մի տեարք էին և չէին կրը-
նար բոլանդակ Հայոց երկրին հասնիլ, այլ
Գրմապետութիւնն. ինչպէս նոյն պատմիչն
(Խորենացի) յետոյ կ'ըսէ, Ա. Արտաշիսի
բերած կուռքերը յիշելով. « Զոր առեալ
» Գրմապետացն՝ որ էին յարգէ վահուռ-
» նեաց... կանգնեցին յայլեւայլ կողմանս,
» և զՀերակլեայն՝ զՎահագն իւրեանց լար-
» կանելով նախնին՝ կանգնեցին ի Տարօն
» իւրեանց սեփական գեւեղք յԱշտիշատ...
» (իսկ Տիգրան որդի Արտաշիսի) ցատուցեալ
» ընդ վահուռիսն, եթէ ընդէր իւրեանց
» սեպհականին իշխեցին կանգնել զպատկերն,
» ընկենու զնոսա ի քրմութեանէն, և զգեօղն
» յարգունիս առնու. բայց վերջը՝ տեղն
» նորէն դարձաւ անոնց, իսկ քրմապետու-
թիւնն թուի թէ ոչ. այլ Տրդատ՝ երբ շըն-

ջեցաւ կռակաշարութիւնն՝ ջնջողին Լուսաւորչի
պարգեւեց զԱշտիշատ: —

Տարօնոյ քրմապետութիւնն՝ ընդհանուր
ազգին կրօնական գլուխ պէտք չէ համարիլ,
այլ մի ի գլխաւորաց. իսկ ամենէն գլխաւորն
իրք քրմապետաց Գրմապետ՝ թագաւորական
մեհենատեղեաց քով գտուէր, և նոյն իսկ
(եթէ և ոչ միշտ) ի թագաւորական ցեղի.
ինչպէս Երուանդ սուրու զայն պատիւ՝ իր եղ-
բոր Երոտազայ. Արտաշէս Բ՝ իր որդւոյն Մա-
ժանայ, ինչպէս նախ յիշած եմք, և զոր յետ
սպանմանն՝ « տարեալ թաղեցին ի Բագ-
» նացն աւանի՝ իբր զՔրմապետ »: Ըսել է
որ այս տեղ էր իրենց գերեզմանատունն
այլ, որպէս թագաւորացն՝ յԱնի. և իբր սըր-
բազան անձին՝ գերեզմանին վրայ բազդին շէ-
նուեցաւ. — Գրմաց և իրենց պատաւորաց
և ապստոց բազմութեան վկայէ և Սարաբոն,
ի յիշեմն զմեհենակալս Անահայ և Մայ
զից ի փոքր Հայս: Սա յիշէ և Քրմոնհիս
կամ Քրմանոյշս, որք արանց պէս դասակարգ
պէտք է աւելցնած ըլլային:

Ոչ միայն մեծ պատիւ ունէին Քուրմք ի
ժողովուրդէն, այլ և ի թագաւորաց, ազա-
տութիւն ի հարկաց և ի ծառայութենէ, ա-
ռաւ եկամուտ. և ժառանգութենէն զատ շատ
այլ պարգեւ կ'ընդունէին յարգունուտ, և
պատեարարմի տաւորի մասն՝ ինչպէս կ'ըսէ Ա-
զաթանգը Ա. Խոսրովու համար, թէ « Հին-
» գերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ ա-
» ւարացն ածելոց, և մեծամեծ պարգեւս
« քրմացն շնորհէր »: — Ըստ պատուոյն և
աստիճանին՝ հարկ էր որ քրմաց և քրմապետի
Զգեստը այլ վայելուչ և ձոր ըլլային. գլխա-
նոցն խոյր էր փռեգածու. հագուստն՝ պա-
րէզօս մի չափաւոր լայնութեամբ, որոյ վրայ
շուրջառի պէս վերարկու մի. բայց յատուկ
յիշուած չեն առնոք. և մնացածն՝ հասարակ
քուրմի ձեւ կըրնայ ըստիլ, ինչ որ կու տես-
նենք եղջերուանման պաշտեալ կենդանուր բազ-
նին քով կեցողներուն վրայ. որոց մէկն՝
գաւազանակիրն՝ թուի ներքինի. մօրուաւորին
այլ պատասկաց ապարանջանք գիտելի են:
Թէպէտ անծանօթ մեզ ըսինք քրմութեան
գասակարգը, այլ համարձակիմք կարծել՝ թէ
ինչպէս հիմա ի կարգի քրմատոնական քա-

հանայութեան՝ ստորին առախճաններ այլ կան, ոչ միայն այնոր մէջ այլ կար, նա և Սար-կառագն. վասն զի տա քրիստոնէութեան դաւանակալի վերաբերեալ անուանց նմանութիւն չունի, և ոչ յայտնի իմաստ: Ոմանք կարծեն՝ թէ Սար (սպաս և զարդ) բառէ առնուած է, կամ Սարիկ՝ իբր ջօղ, ծածկոց. կամ լաւ եւս Սարկ, որ առանձին գործածուած չէ, այլ ի բարդութենէն Սարկարան՝ կ'իմացուի (սուրբ) ամաններու տեղ կամ պահարան. որով օտարական այլ կ'ըլլայ պահպանողն, կամ պահպանողաց գլխաւորն: Ոմանք այլ համարին թէ հոմանիշ է պարսիկ Երքեթար, چتر کار բառին, իբր գլուխ գործաւորաց, գործաւագ. կամ «երքեթալ» գլուխ գիտնաց, բանախնդրաց: Ինչպէս այլ ըլլայ՝ հակառակ չէ որ մեր հեթանոսաց քահանայութեան մէջ այլ այսպիսի և այս անուամբ պաշտօնեայ մի ըլլար: — Նոյնպէս հեթանոսական դասակարգէ մնացեալ երեւի ինձ և Մոնքն, ինչպէս կոչուին ի վանորայս ժառանգաւոր զրպիւրքն, և աշակերտքն ի Գողթնեցոցն: Քաւրմի և Մոգի պէս նշանաւոր հին անուն մի է և այս. ի խօսս Զուլայեցոց լսուի և Մոնքու, բիւն: Յօտար լեզուս չգիտեմ թէ կայ այսպիսի կամ մերձաւոր անուն, բայց Մոնքին Սթենացոց, որ նշանակէր յասուկ տեղոյ մի Սթենացոց Անահտայ տուն: — Գուցէ զաստկարգութեան մէջ էր և Դաստիարակն, որ հիմայ սովորաբար մանկանց խնամողն և վարժող նշանակէ, և մոգոց Տեւոդոբը յիշեցնէ:

Յառաջաբանիս մէջ կանխեցինք բուն՝ թէ այս գրած նիւթիս, այսինքն հին և սին հաւատոց Հայոց, չեմք ուզեր խորամուկ ըլլալ, պատմական աւանդներ չունենալով՝ օտար զիջարանութիւն ստորագրել, կամ սնտոխ ազանդոց և զրուցաց վրայ երկար իմաստասիրել. որ՝ եթէ արժէք այլ ունի՝ թողուցինք յարգողաց: Մեր ճանչցածէն և բառէն կրնանք հիմայ բովանդակել կամ անդրադարձնել քանի մի բան. և նախ, որ բուն ըստ անուանն նշանակաւորաբիւն որով կոչուի սովորաբար Աստուծէ զուրս պաշտօնէ, շատ ծաւալուած չերեւիր ի Հայս, և ոչ շատ հին. քանի մի մեծ Բագարաններ իբր ուխտասե-

ղիք, և Էջմն բազնաց կամ մեհենից յիշատակք՝ տան զուշակել անոնց քիչութիւնը. Արշակունեաց տիրապետութեամբ ի Հայս՝ անոնց կրօնից մուտքն կամ ծաւալումն ի Հայս, և անոնց աշխարհակալութեամբ՝ յունական զից մտնելն յերկիր մեր, յայտնեց և անոնց պաշտաման նորութիւնը. և թէպէտ անոնց իւրաքանչիւրին այլ հայրական աւանդներ սեփականած են, բայց այս՝ կամ կերպով մի թարգմանութիւն է այն զից բռնաւորութեան, կամ յարմարութիւն Հայոց մէջ համարեալ անձանց՝ իբրեւ ֆաշ կամ վէհագն, որ այդ եկամուտ կոոց պատճառաւ՝ աստուածացան: Հայոց բնիկ կամ աւելի աստուածակերպք՝ Աստղիկ և Վահագն երեւին. յետինս այլ ինչպէս բաժնեմք ի կարգին, նախ ի վրաց պաշտօնեցաւ. և նոյն ինքն Անահիտ՝ որ Հայոց աշխարհին տիկին և խնամակալն համարուէր, նոյն անուամբ ի Մարաց և ի Պարսից առաջոց պաշտուած էր, և Արաւմազդ ինքն՝ յայտնի է իր պարսիկ կամ գանգիկ (Ուրմիզ) անուամբն: Այս չափս յիշելով աւելորդ համարիմք միւս զից ծագումն և պաշտօնը կրկնաբանել:

Երկրորդ, հետեւանք վերը ըսածին, որ Հայոց մէջ առաջ աւելի զիջազանց պաշտօն կամ պատիւ էր քան զից. բայց հակասութիւն չկարծուի զիջագն բռնով Դիք եմթադրել. ֆաշի տեղ կ'ըսեմք այս բառս, սովորութեան հետեւելով, և այնպիսի անձանց՝ զոր գերագոյն մարդ համարէր ժողովուրդն, և միշտիկ իմն ընդ ինքն և ընդ Աստուած կամ աստուածս, յետ ընդունելոյ զատոնք: Այս, երրորդ, երկար ժամանակ ի Հայս հասարակաց կրօնն էր, (յետ ուղիղ աստուածապաշտութեան)՝ տարտամ տարրապաշտութիւն մի, հանդերձ Աղծարաց ազանդներով, որ կերպով մի աւելի այլ աւելորդական եղած է, և հետքն ու շղորդն ինչուան հիմայ թողած, ինչպէս յայանուի Հմայից վրայ գրուածէն: Ասոր այլ վրայ հասած է Մոգոքախնն, թէ քաղդէական կերպով Աստեղագիտաբանութիւն զարդեշտական օրինոց, որուն՝ անդտեղ յաշոր-մէջ և Իրակապաշտոքախնն: — Հայաստանի միջակայ դիրքն և իր ժողովրդական օտարամուտ և հանրասփիւս բարքն՝ այս երեք տե-

սակ աղանդները՝ երեք կողմէն ընդունած է. զՀմայութիւնն՝ յարեւմտեաց՝ ի փոխադարձ (ուստի յետոյ և զկուռս). ի հարաւոյ՝ զԳաւ. դէռքիւն, յարեւելից՝ Պարսից աղանդն և զկրակն. երեքէն այլ անոնց պաշտաման բաւերը սեփականած է, ինչպէս իւրաքանչիւր հաւատաց և պաշտելեաց վրայ զլսած աստին բացատրած ենք:

Հապա չորրորդ կողմէն՝ ի հիւսիսոյ, ինչ ընդունած են Հայք: — Այդ կողմն մեծ բնական կամ աստուածագործ պարբայով մի պատած և բաժնուած էր իրենցմէ. որ է Եփ. կասեան լիբանց կապակցեալ ուրար. սակայն այն այլ ունէր իր մէկ քանի պահակներն և անցքերն. որոց կարօտ այլ չեն գաղտփարք՝ երկրէ երկիր անցնելու, և ոչ արգելք՝ լիւրինքն և սառնամանիք: Հայոց ոտք՝ թէ ոչ ամէն ճամբայ բացած են, գոնէ կոխած են. կրնամք ըսել թէ ամէն ազգի լեզուի և կրօնից և զոյից ծառիութիւնն ունեցեր են. և եթէ վկայուած այլ չէ՝ և ոչ այլ ժառուի՝ թէ ի հիւսիսոյ այլ կրօնական ինչ առած չլլայն: Հին աստին ընդհանուր անուամբ հիւսիսաբնակքն Սկիւթացի անուանէին, որոյ պարզագոյն տարրն է Սակ. և Սակը կամ Շակը յատուկ ցեղ մ'այլ շատ հեղ և շատ տեղ յիշուած է ի պատմութեան. նա եւ ի Հայս՝ անոնցմէ կարծուի մնացեալ Շակաշէն գաւառի անունն. վասն զի ծանօթ և հոչակուած է Սակաց արշաւանքն յարեւմտեան Ասիա, անցանելով ընդ այս ի փոքր Ասիա, վեց դար առաջ քան զՌուսական փրկիյն, և անոնց հալածմամբ՝ հաստատուած Սակական սօսքն և բարեկենդանն: — Ս. Եպիփանի՝ իր Հերձուածոց զորոց մէջ առաջին աղանդն յետ ջրհեղեղի Սիւրբական կոչէ Տաւմաթ, մինչեւ ի ժամանակ թաւրայի հօր Աբրահամու. անկէ ետեւ կարգէ զՀելլենական կամ զիցական: Այդ հին աղանդն հասարակ համարելու է և Հայոց և իրենց համանման փոխադարձ. որոյ նշան մ'այլ կրնան համարուիլ ասոնց և մերոց լեզուի մէջ նոյնանիւ բառեր. ինչպէս, Պապ՝ որ նշանակէր անոնց մեծ աստուածն. Աթիս կամ Ափիս շատուածն երկրի, ի մեղ այլ Ափն ցամաքի նշանակ, նա եւ հող կամ երկիր նշանակելով գրուած կայ. « Տիսի գաս»

» տեղս և զլուսին՝ զի կային անկեալ տփի »: Այսպէս Տաւմաթ՝ Կրակի զիցունի, առ մեղ Տաւ ըստն տարբութեան, առ Հնդկա Տաւաւտ, և այլն: — Եթէ ստոյգ և եթէ հաւանական համարուի յետջրհեղեղեան նախապետաց բնակութիւնն ի Հայս՝ մինչեւ ի խառնումն և բաժանումն լեզուաց, Եպիփանու սկիւթական աղանդոյ կենդունին այլ կ'ըլլայ ի Հայս, և Հայկական ու Սակական աւանդ մէջ այլ մեծ տարբերութիւն չկայ, երբ յիշենք և և տառից լծորդութիւնն, և Հայկ ու Հայ անուանց տարրն և շատ հեղ Հա գրուիլն փոխանակ Հայի, վրաց այլ զմեղ Հառս կոչելը կամ գրելը: Թողով զայսպիսիս առ բանասէրս, կարեւոր ընդունելիք երեւցածն է Սակական կրօնից հնութիւնն, փոխադարձ այլ նմանութիւնն և հնութիւնն, յորոց շատ բան տիրն Յոյնք, Հայոց այլ փոխադարձ հետ (շատ հեղ յիշուած) ազգակցութիւնն, որոց նոյն վկայութիւն և նախապետքն՝ Գոմար և Աբրահամը. և մերոց և այս ազգաց լեզուի, զգեստուղ. և հին կրօնից նմանութիւնք. զորո՞հետազօտութիւնք լեզուաբանականք, կրօնաբանականք և աշխարհագրականք կամ ազգաբանականք, յուսամք որ աւելի այլ պարզեն:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

— * —

Վերջի անգամ մ'այլ ակնարկելով մեր երկրի դրից և չորս կողմէն պատած այլալեզու և այլալիւրս ազգաց, Հայաստանի բնական խառնարան մի ըլլալն լեզուաց և կրօնից, զարմանք չէ, և Հայ ազգին բարքն և բերմունքն այլ քննելով՝ գրեթէ և հարկ էր, և եթէ բաւական նիւթեղէն յիշատակաւ րանք չկան կամ չեն երեւիր, և ոչ իսկ ազգային գրաւոր աւանդութիւնք, կրնան քիչ շուրիւլ օտարաց մէջ, մանաւանդ Յունաց՝ գրած յիշատակք. մեր կողմանէ այլ՝ ազգային լեզուի ընդարձակ ասպարէզն կամ բովքն, որ դեռ անսպառ է, և ոչ ըստ բաւականին փութուած, կամ ոչ արուեստագէտ հմուտութեամբ.

Թեո ամենայնի հարկ է յիշել, թէ այս-
քան այլեւայլ ծագմամբ կրօնից ընդունող և
պահող ազգն, որ և յամառութիւն ունի ի
կարծիս՝ հանդերձ իրեն դիւրաւ յարելովն
յօտարս, ինչպէս այս ամեն բան թողուց,
անհետ ըրաւ, և ոչ կամ լի է գրեթէ ոչ ինչ
գրաւոր կամ նիւթական մնացորդ մի թողուց՝
իր հեթանոսական գրուածոց և քանդակաց,
կոտց, սպասուց, և այլն։ — Եւրոպայի
համար կրքնամբ ըսել, թէ դեռ երկրին ծոցը
բաւական հետազոտուած չէ. գրուածոց հա-
մար՝ թէ շատ չէին և կամաւ այլ ջնջուած
են։ Իսկ միանգամայն հին հաւատոց և կրօ-
նից համար (թողլով աղթարական մնացեալ
հետքը), հարկաւորիմք խոստովանիլ՝ որ հրա-
շայի կերպով մի եղած է այն բանս. և ա-
ռանց այսոր չէր կրքնար ըլլալ առ հասարակ
բազմամիլիոն ազգի մի թողուլ իր նախնեաց
պաշտօնն և պաշտելիքը, և ընդունել զքրիս-
տոնէութիւն. և արդէն մշտնջենաւոր հրաշք
մի է, որ այն արիական կոչուած (Հայ)
ազգն, իր ցեղակցաց մէջ մի միայն և բո-
լորովիմք քրիստոնեայ ըլլայ, մինչ այլք կամ
իրենց հին զիցաբանութիւնը պահած են,
և դեռ իրենց կրակը վառեն և պատուեն,
կամ իշխմութիւն ընդունած են։ — Շատ
ազգաց մէջ առ փոքր փոքր մնում է քրիստո-
նէութիւնն, նոյն իսկ և ի Հայս՝ ի սկզբան
քարոզութեան Առաքելոց և առաքելաշախիղ
Հարց. և միշտ մնացեր է Բարդղղիմայ և
Թադէոսի սերմանած հատն և վառած լոյսն,
այլ նուազ, սակաւ և ծածուկ. ինչպէս վը-
կայեն նահատակութիւնը անոնց աշակերտաց
'ի Գողթն և ի Սիւնիս, Ոսկեանց, Սուքիա-
սանց, Սանդիսոյ, Թէոդորոսի Սալահունոյ,
Արարատեան վկայից, Մհերուսիան եպիսկո-
պոսի կամ եպիսկոպոսապետի Հայոց, և այլն։
Բայց այսոնք, եթէ կրքնամբ ըսել, աստուա-
ծային ընդհանրական սքանչելեօք էին, ինչ-
պէս և ուրիշ ազգաց մէջ. իսկ Տրդատայ՝

այն Հայոց զոռ և զոռոզ և ամեն կերպով
հակայ տիրապետին աստեն, կարծես մարդկան
միաքն այլ պահանջէ՝ որ Աստուած այլ գե-
րագոյն զօրութիւնը յայտնէր, և անով նուա-
ճէր նախ այն սէզ թագաւորը, — « որ այնչափ
» երեւելի եղեալ քաջութեամբք առաւելոյր
» ի մարտս պատերազմացն. նա եւ յուզում
» պիտղոն Յունաց՝ հակազօր երեւեալ... որ
» սիգալովն աւերեաց զթումբս գետոց, ցամա-
» քեցոց իսկ ի սիգալ իւրում՝ դորձանս
» ծովուց ». — յետոյ այնոր հզօր բազկաւ իրեն
բիրս և հնապաշտ հպատակաց բազմութիւնը,
աշակցութեամբ կենդանաբար Հուսաւորի
փափուկ ձեռաց։ Երկու բարք և բռնութիւնք
միախառն՝ կատարեցին Հայոց դարձն ի հին
հեթանոսական հաւատոց, ի նոր և ի բուն
ի ճշմարիտ հաւատս Քրիստոսի. որոյ շուտա-
փոյթ ընդունելութեանն հարկ և առիթ եղան
այն սքանչելիքն՝ զօր պատմէ Ալաթմանդել,
և որք ինչպէս այլ քննուին, ամփոփուին և
մեկնուին, չեն կրքնար առանց հրաշից օտակ
երեւել, և խախտել Հայոց 1600 տարուան
հաստատուն և եռանդուն աւանդութիւնը. զոր
ի միջի այնքան այլազեմից և հալածանաց՝
(բացի քանի մի վատ ուրացողներէ) սիրով և
պարծանօք պահեցին և պահեն, և յոյս ու-
նիմք որ պիտի պահեն. շնորհօք առ հառա-
բակ մարդկութեան յաւիտենական լոյս ծագող
Ամենափրկչին Քրիստոսի, և աղօթիւք յա-
տուկ Հայոցս Հուսաւորչին Ս. Գրիգորի. Սմա-
սէր և պատիւ, և Նմա փառք և գոհութիւն.
և ինձ ուրախութիւն, որ այսպիսի յիշատա-
կաւ՝ քաւեմ գրիս, ասանկ խափանուած և
խափանելի իրաց վրայ գրեւէն։

Ուրախ լեր հոգի քրիստոնէութեան, զի
խաւարն մերժեցաւ և տիւն ծագեցաւ. և միշտ
և հանապազ լուսատու լիցի քեզ Քրիստոս.
որում միւս անգամ, բիւր անգամ և միշտ՝
փառք, այժմ և ի յաւիտեանս։